Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 18-ի N 349 - Ն որոշման

«Հավելված
Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման,
պահպանման, վերարտադրման և օգտագործման
2021 թվականի տարեկան ծրագրի

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

NN ը/կ	Ձկան տեսակը	Ձկնորսության թույլատրելի առավել քանակություն (տոննա)	Ձկնորսության համար թույլատրելի քաշը միավորի համար (գրամ)	Նախաձվադրային-ձվադրման ժամանակահատվածը
1.	Սիգ	250	400 գրամից ոչ պակաս	նոյեմբերի 15 - հունվարի 15
2.	2021 թվականի համար Սևանա լճում կարաս և խեցգետին կենդանատեսակների համար արդյունագործական որսի չափաքանակ չի սահմանվել:			
Ընդհանուր պահանջներ				
3.	Սիգ ձկնատեսակի որսն իրականացվում է Սևանա լճի ամբողջ տարածքով, ափից առնվազն 500 մ հեռավորության վրա:			
4.	Սիգի արդյունագործական որսն իրականացվում է դնովի ցանցերով (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ և ավելի):			

5.	Արգելվում է որսն իրականացնել հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի միջոցով, սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և ցանցավանդակի չափը 80 մմ-ից պակաս (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ-ից պակաս) ձկնորսական ուռկաններով (ցանցեր):
6.	Արգելվում է Սևանա լճում արդյունագործական որսը սույն հավելվածի 1-ին կետով չսահմանված կենդանատեսակների նկատմամբ:
7.	Սևանա լճում կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետ սահմանել 2021 թվականի մարտի 25-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը:
8.	Արգելվում է ձկների արդյունագործական որսն իրականացնելու նպատակով Սևանա լիճ մուտք և ելք գործել Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի N 332-Լ հրամանով հաստատված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

18.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ